

Simplifying

ԱՐՄԻՆԵ ԱՇՈՏԻ ՀԱԿՈԲՅԱՆ

**Ֆոլկլորագետ, արվեստագիտության թեկնածու,
Խ. Արովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի
Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս
E-mail.armine151@mail.ru**

«Երաժշտական Հայաստան» ամսագիրի խմբագրական խորհրդի անդամ՝ Ավելին Աշոտի Փակիևսկանի 12.12.2018 թ.
Երաշխավորությամբ և գրախոսությամբ՝ ընդունելով է տպագրության դեկտեմբերի 11-ին
ներկայացրել է հեղինակը՝ հոկտեմբերի 2-ին

ՄԾՈ ԴԱԾՏԻ ԾԽԱՎԿԱՆ ԵՐԳԵՐԸ

Մշու աշխարհ անուշ է.
Սարն ու ձոր մշուշ է.
Հիսիս քամին քշէ զիս՝
Ուր ծոցի մէջ թաղէ զիս (1. Էջ 147):

У тиշ անոնք ժառանգություն ենք ստացել հնագույն ժամանակներից ի վեր, և շատ ուսումնասիրողներ դրա ծագումն ու իմաստը, առաջացումը կապում են հնագույն արձանագրություններում կիշատակվող ցեղերի ու աշխարհազրական անոնների, քաղաքական դեսպրերի կամ բնական որոշ երևությունների հետ։ Ժողովրդական ամենասիրն ավանդույթներից մեկի համաձայն Մուշ անոնք համարվում է «մշուշ»-ից առաջացած։ Հսոս ավանդության՝ Արածանիում լուսանալու ժամանակ երիտասարդներից իր մերկությունը քողարկելու համար «մշուշ» արարում էր սիրո սաստվածուին՝ Աստղիկը (2. Էջ 197-198)։ Եթանոսական ժամանակներից մեզ հասած այդ ավանդության արձագանքը կարելի է տեսնել նաև Կոմիտասի գրառած «Մշուշ» սարեր մշուշ էր» պարերգում (3. երգ թիվ 207, Էջ 133)։

207. ՄԵՇԻ ՍԱՐԵՐ ՄԵՇԻՆ ԵՐ

[Չափավոր. Sostenuto]
[Սիստանալ]

Մը - շու
Մը - շու սա - թիր
խոտ ջուր մը - նուշ
ա - նուշ էր,
էր,

[Խայբուլ]

հար նազ, հար նազ, հար նար - զիզ,
հար նաս, հար նաս, հար նար - օհա:

Մշու սարեկ մշուշ էր,
Հար նազ, հար նազ,
Հար նարգիզ:
Մշու խոս ջուր անուշ էր,
Հար նազ, հար նազ,
Հար նարգիզ:
Ի գրառած Մշու երգերի մեջ հետաքրքրա-

Կոմիտասի գրառած *Մշնդիրի մեջ հետաքրքրա-*

կան են մի քանի հարսանելան երգեր՝ «Վեր էլի, հայ», «Խարսիկ վեր արեն», «Մը բորսէ դամինա», «Ծկավե զավե», որոնց միջոցով նաև կարելի է պատկերացում կազմել մշեցիների ծիսական ավանդույթների մասին։ Հարսանիքը Սուշում մի յուրահատուկ արարողակարգ էր՝ հարսնացողի ընտրույթուն, աղջկւես, նշանդրեր, հաց կորել, հարսնատես, խոնչա-բոխչա, տաշտադրոնք, ազպալվածք, հիճապրեր, կնորել կամ թրաշ, պսակ և այլն։ Նշված բոլոր արարողություններում վառ ընդգծված են մշեցիներին հասուկ ստվրույթունները, իսկ այս ամենի անքակտելի մասն են կազմել երգն ու պարը։ Մշեցիք ավանդապահ ժողովուրդ էին։ Իրենց ապագա հարսնացուին ընտրում էին դեռ օրորոցում։ Այդ երգերը կոչվում էին օրորոցախազ (օրորոցի կամարի վրա այդ առիթով խազ էին քաշում) (1. էջ 157)։ Հնում հարսնացողի ընտրույթունը կատարում էին ծնողները, և պատահում էին դեպքեր, երբ միայն պսակի օրն էին հարսն ու փեսան միմյանց տեսնում։ Աղջիկ տեսնելու գնում էր երիտասարդի մայրը մի քանի ազգականների հետ։ Եթե աղջկա ծնողները դրական տրամադրությամ էին լինում, բռնում էին, որ ապագա փեսայի ծնողները տեսնեն իրենց աղջկան։ Վերջիններս զնոնում էին աղջկան, խսում նրա հետ, շատ անզամ նաև մերկացնում նրան։ Հավանելուց հետո համրուրում էին ձակատը, ձեռքին մի ոսկի դնում։ Երկլողմանի համաձայնության գալուց հետո հյուրասիրում էին և հեռանում (1. էջ 157)։ Աղջիկտեսին հաջորդում էր նշանդրերը։ Այս անզամ փեսացողի հայրը իր տուն է հրավիրում բարեկամ տղամարդկանց։ Հյուրասիրելուց հետո զնոն էին հարսնացուի տուն, հարսնացուին ներս էին բերում, առատ ոսկի նվիրում և նշանում։ Երբեմն իրավիրում էին քահանա, որ օրինի ամենը (1. էջ 157-158)։ Պատկի արարողությունը մշեցիների մոտ հագեցված է երգով, պարով, նվազով, հետաքրքրական ստվրույթուններով։ Ահավասիկ դրանցից մի քանիսը։ Հարսնացուի հանդերձը հազգմելուց երգում էին (1. էջ 166-167).

Ֆ ո լ կ լ ո ր ա զ ի տ ո ն ի թ յ ո ւ ն

Տնիկ ու շէմքիկ,
Էլ դուք միք ժածա,
Մենք ինք ժաժալու,
Ծողիկ տանելու:

Աղբրիկ էլ չծըմծըմաս,
Մաղիկ էլ չխըլվըլաս (շարժուել),
Մենք ինք երալու,
Ծողիկ երամէն ջոկելու:

Գիշեր, դու տարի եղիր,
Աղօթրան դու լէ հեռացիր,
Մէր երամ հասրաթ հանիր,
Էս անդարձ, օղոր (յաջող) օրին:

Երբ հարսին հանում են հոր տաճից, նրա գրանը չամիչ են լցնում և մի քանի զույգ փորք գոլպաներ դնում, այս ժամանակ աղջկները երգում են (1. էջ 168).

Զշամիչ մաղով մաղեցին,
Ծողերի (հարսնացուի) չերեր լցրեցին,
Չղարիք ճանիայ դրեցին:

Սովորություն էր, որ հարսնացուն տանելուց հետո նրա հետից չեն ալլում, որպեսզի չանհետանա աղջկա հետքը և հայրական տունը չավիրվի: Այս ատիթով աղջկները երգում են (1. էջ 168).

Մէրիկ, մի աւլի զոտախտիկ,
Որ չարի քու աղջկայ հետիկ,
Թըղ մնայ քի նմուշիկ,
Որ հանիս քու պատի հասրաթիկ:

Պսակ տանելիս հարսնացուի կոշիկների մեջ զյուղերում զարբանացան ցորեն են ածում, իսկ քաղաքում՝ մանր դրամ, որպեսզի հարսի ուոր քարով լինի (1. էջ 168): Իսկ ահա քազվորի տաճից եկող հարսնացները աշխատում են հարսնացուի տաճից զողանալ մի խոփ, որ ապագա հարսը չխոսկան լինի, մի զդալ, որ նրա քաժին դամարձն էլ նրա հետ զնա (1. էջ 168):

Այսպիսով, հարսին դուղ-զուռնայի առաջնորդությամբ ուղևորում են դեպի եկեղեցի: Երբ հարսին զոլպած-զարդարված հայրենի տաճից դուրս են բերում, դրան առաջ այս երգն են երգում (3. էջ 178, երգ թիվ 63, էջ 72).

63. ԽԱՐՄԻԿ ՎԵՐ ԱՐԵՇ (Մուշ)

[Ասերգով. Recitativo]



Խարս վեր արի, նազ մի անե,
Փեշերդ տուր վեր, թող մի անե:

Խարս, վեր արի քյո թախտեն,
Գանգյատ մ'անե քյո թաղտեն:
Խարս, վեր արի քյո օդից,
Գանգյատ մ'անե քյո թախտից (3. էջ 28):

Եկեղեցում պսակի արարողությունը ավարտելուց հետո ուղևորվում են դեպի փեսայի տուն: Երբ մոտենում են փեսայի տամը, մնելու երգում է.

Թագուորի հէր տիւրս արի,
Փունջ մը շուշան ինք բերի,
Թագուորի մէր, տիւրս արի,
Թոփ մի խութնի ինք բերի,
Թագուորի աղբէր, տիւրս արի,
Ապշմէ փէժվիր մ'ինք բերի (1. էջ 170):

Գյուղերում տղայի մայրը մի քանի հաց ձեռքին դուրս է զալիս, հացը դնում է հարսի զլիսին, մնացած հացերը ձեռքին սկսում է պարել: Այդ միջոցին մեկը շրով լի մի փարզ խփում է զետնին՝ հարսի ու փեսայի առջև, ու կոտրում: Այդ երևույթը չարխավան նշանակություն ունի: Տամեցիներից ունաճը կոտրից չամիչ, ընկոյզ, երբեմն նաև մաճը դրամ են թափում հարսի զրյալին: Տուն մտնելուց առաջ քահանան փեսայի մորը խնդրում է, որ զա և ալեւտարանը համբուրի, իսկ ծերութիներից մեկն ասում է (1. էջ 170-171).

- Ո՞վ ջաղամաթ, հանդիսականք,
Դուք լէ օրիներ մըր թագուորին.
Որ մըր ջուխտաք ծլին ծաղկին,
Ընդրանց պտուղը մանկունք եղնեն:
- Դուք օրիներով մըր արև-լուսին,
Մենք լէ կը խսդենք վերին հօրին,
Որ մըր ջուխտակի աղուբաթին
Քարով խերով որդիքդ հասնին:

Հարսանյաց հանդեսին թազվորի մորը պարելու հրահրող դեր ունի այս երգը (3. էջ 178, երգ թիվ 73, էջ 75).

73. ՎԵՐ ԷԼԻ, ՀԱՅ Յ (Մուշ)

[Եռանդով. Energico]



Վեր էլի, հայ, վեր էլի,
Խարսի կեսուր, վեր էլի:
Վեր էլի, հայ, վեր էլի,
Թագվորի մներ, վեր էլի:

Հարսանեկան երգերի շարքից հետաքրքրական են Կոմիտասի գրառած «Սը քորս դամինա»-ն, «Ծկավել զավել»-ն: Թեպետ երգի խոսքերը քրդերեն են, բայց այս երգերը բնիկ ավանդական հայկական Մշո հարսանեկան երգեր են: Սրանք, բնականարար, քրդական հարսանեկան երգերի եղանակներին նմանություն չու-

Ֆոլկլորագիտություն

մեն, մինչդեռ դրամք ոճական անվիճելի ընդհանրություն ունեն հայ ավանդական հարսանիքի, մասնավորապես փեսային գովերգող երգերի հետ, և երկու երգերն էլ իրենց վերջավորություններով (հանգածներով) ակնարկում են տվյալ երգերի հնության մասին: Պրոֆետոր Ռ. Արայանն այս առջիվ գրում է. «Եթե դրանց խորեն ազգագրական առանձին հետարքրորդություն չեն ներկայացնում ոչ հայկական, ոչ էլ քրդական բանահյուսության տեսակետից, ապա եղանակներն իրենց խոր ավանդականությամբ ու յուրահատուկ վիպականությամբ կարող են դիտվել որպես հայկական գյուղական ֆոլկլորի խիստ հետարքրական նմուշներ» (3. էջ 179):

Այս երգը հայտնաբերվել է Կոմիտասի կազմած հայ գյուղական երգերի ժանրային հատուկ ժողովածուում: Առաջին գրանցման մոտ Կոմիտասը մակագրել է «Քրդերեն արտագրել եղանակը» (3. էջ 179, երգ թիվ 81, «Մշո հարսանեկան», «Մը քորսէ դանինա» (3. էջ 78):

81. Մշո ՀԱՐՍԱՆԵԿԱՆ



(3. երգ թիվ 82, «Ծկավե Զալե» էջ 78).

[Ազատ շափով. Tempo rubato]

Չկա - վե զա - վե թա - զա,
լա - ոկ ինք թե - զա - վա,
չկա - վե զա - վե թա - զա,
լա - ոկ ինք թե - զա - վա:

Մշո հարսանեկան երգերից է «Վայ, մայրիկս, զիս տարան» հարսի գովերգը: Այն իր կառուցվածքով պարային է, բովանդակությամբ՝ բանաստեղծական, բանաձևած միջոցներով՝ հարսանեկան (4. էջ 23): Այն լի հարսի գովերգ է. «Նիզյար մներ հալով եղ՝», լի հարսի իրաժշռություն, «Վայ, մայրիկս, զիս տարան», լի հարսին միմիթարելու երգի տարրեր ունի. «Տարան, տարան, թոն տանին, օր մը էսօր կու բերին» (4. էջ 23, երգ թիվ 7. էջ 67).

Արձեշու սար երկու հերկ,
- Վայ, մայրիկս, զիս տարան.
Արձեշու սար երկու հերկ,
- Քաղին, Նիզյար, զիս տարան:

ՎԱՅ ՄԱՅՐԻԿԱ, ԶԻՍ ՏԱՐԱՆ 7. ՕՅ, ՄԱՏՈՒՇԿԱ, ՍՎԵԼԻ ՄԵՆՅԱ

J = 126

1) Ար - մա - շո սար եր - կու ինք, զայ, մայ - թին - կու, զիս տա - րան,
Ար - մա - շո սար եր - կու ինք, թա - ղիմ, որ մա - ղիմ, զիս տա - րան:
Տա - րան, տա - րան, թող տա - ղիմ, օր մը ո - տօր կու - թն - թիմ,
3) տա - րան, տա - րան, թող տա - ղիմ, օր մը ո - տօր կու - թն - թիմ,
4) զայ, մայ - թի - կու, զիս տա - րան, զի - զա - րան թամ - ղիմ տա - րան:
թա - ղիմ, որ մը ո - տօր կու - թն - թիմ, զի - զա - րան թամ - ղիմ տա - րան:

1) 2) 3)

4)

- Տարան, տարան, թոն տանին,
Օր մը ըսօր կու բերին:

- Վայ, մայրիկս, զիս տարան,
Զիզյար բանին, տարան.
Քաղին, Նիզյար, զիս տարան,
Զիզյար բանին, տարան (4. էջ 73-74):

Այս երգի երգասացը Բարսեղ Ստեփանյանն է: Բարսեղը գաղթել է 1915-ին Մշո դաշտավայրի Ծովետ գյուղից: Իր ծննդավայրում եղել է անվանի երգիչ, ունեցել է հարուստ և ավանդական երգացանկ (4. էջ 206): Երգը ձայնագրվել է երգասացի 82 տարեկան հասակում: Այս և մի շարք Մշո երգեր, որոնք գետեղված են «Թալին» ժողովածուում, մեզ են հասել շնորհիվ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկլորագիտության կարինետի 1969 թվականին կազմակերպած գիտարշավի կողմից, որը դեկանալում էր պրոֆետոր Մարգարիտ Արամի Բրուտյանը: Գիտարշավը դեպի Թալին պայմանավորված էր այն հանգամանքով, որ Թալինի շրջանի ազգաբնակչությունը բաղկացած է նաև պատմական Հայաստանի Սաստից, Տարոնից և մասնավորապես Մշո դաշտից 1915 թվականին գաղրած վերաբնակչությունից: Երգերը վերծանել է ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, ԵՊԿ պրոֆետոր Ալինա Աշոտի Փակեանյանը, տերստային վերծանումը իրականացրել է բանագիտական գիտությունների թեկնածու, ԵՊԿ դոցենտ Արտուր Շատերի Սահակյանը:

Մշո ծիսական երգերից են նաև «Համբարձման երկուշարթի» երգերը, որոնց բովանդակությունը, հասկապես սկզբնատողերը հուշում են, որ դրամք կապված

S n l l n p w q h u n n i p j n i g

Են Համբարձման տոնի գուշակության ծեսի հետ՝ նվիրված զարնան զարթոնքի, ծիլ ու ծաղկի, խոտինձի փառաբանությանը (4. էջ 23):

Սշո դաշտավայրում այս ծեսը նշում էին հետևյալ ձևով. Երիտասարդ տավարածները ծաղկեափնջերով զարդարում էին տավարի ճակատներն ու եղյուրները, և այդ երգերը շուրբերին երեկոյան զյուղ էին մտնում ու ծաղկեափնջերը նվիրում զյուղի հարս ու աղջկան:

Ահա այդ երգերից մեկը, որը կառուցվածքով պարերզային է (4. Էջ 22-24, երգ թիվ 81, Էջ 154-155):

ՀԱՄԱՐՁԱՆԻ ԷՐԿՈՒՏՎԹԻՒ 81. ПОНЕДЕЛЬНИК ВОЗНЕСЕНИЯ

♩ = 63

1)

2)

1.2.3.4.5.

1)

2)

Համբարձման էրկուշաքթին.
Համբարձման էրկուշաքթին.
Վերցի զինցիս ու զկերնդին,
Հըս զիտու ափին զացի.
Վերցի զինցիս ու զկերնդին,
Հըս զիտու ափին զացի.
Ծորեցի, ծորթպիտեցի,
Մանդրիկ-մանդրիկ խորմեցի,
Մանդրիկ-մանդրիկ խորմեցի,

Տեղեկություններ հեղինակի մասին. ԱՐՄԵՆԵ ԱՇԾՈՒ ՀԱԿՈԲՅԱՆ (ծ. 27.12.1981 թ., ք. Երևան): Ավարտել է՝ 2001-ին Երևանի Ուժիշխանի անվ. Երաժշտական ուսումնարանը, դաշնամուրային բաժինը (դեկ.՝ Ժ. Գ. Գավջան), 2006-ին՝ ԵՊԿ Երաժշտագիտական բաժինը (դեկ.՝ Ա. Ա. Փափլանյան), 2009-ին՝ ասպիրանտուրան (դեկ.՝ պրոֆ., արվեստագիտուրյան բեկնածու Ա. Ա. Փափլանյան): 2011-ին՝ ՀՀ ԳԱԱ ԱԻ պաշտպանել է բեկնածուական թերթ՝ «Սիցնադարյան ժողովրդապրֆեսիոնալ Երաժշտական ստեղծագործության լեզվածական առանձնահատկությունները» թեմայով (դեկ.՝ պրոֆ., արվեստագիտուրյան բեկնածու Ա. Ա. Փափլանյան): Դասավանդում է՝ 2006-ից առ այսօր Երևանի Արևո Բարձանյանի անվ. Երաժշտամանկավարժական բոլեցում՝ հարմոնիա, տեսություն դասընթացների դասախոս, 2017-ից առ այսօր Խ. Արովյանի անվ. ՀՊԱՀ Երաժշտության մանկավարժության ամբիոնում՝ սոլֆեզօն, հարմոնիա, պոլիփոնիա, հայ Երաժշտության պատմություն, հայկական ժողովրդական ստեղծագործություն դասընթացների դասախոս։ Հետինակ է գիտական հոդվածների՝ «Ժողովրդական ստեղծագործություն դասընթացների դասախոս»։

ոաժշական ՀԱՅԱՍՏԱՆ 2(55)2018

ՖՈԼԿԼՈՐԱԳԻՒՆԻՔՆԻ

կան երգի և ժողովրդամասնագիտացված արվեստի առանձնահատկությունները», ՀՀ ԳԱԱ ՄԻ երիտասարդ հայ արվեստագետների գիտական 3-րդ մասաշրջան, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2008, էջ 118-129, «Սիզնադարյան ժողովրդապրֆեսիոնալ երաժշտական ստեղծագործության լեզվածական առանձնահատկությունները», //Երաժշտական Հայաստան, #1 (36) 2010թ. Եր., «ԵՊԿ հրատարակություն», էջ 17-21, «Գուսաններն իրքի աշխարհիկ մասնագիտացված արվեստի կրողներ հին և միջնադարյան Հայաստանում», //Երաժշտական Հայաստան, #1(36)2010թ. Եր., «ԵՊԿ հրատարակություն» էջ 22-24, «Ակնա երգերը որպես գուսանական արվեստի օրինակ», ՀՀ ԳԱԱ ՄԻ երիտասարդ հայ արվեստագետների գիտական 4-րդ մասաշրջան, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2010, էջ 204-211:

Сведения об авторе: АРМИНЕ АШОТОВНА АКОБЯН (род. 27.12.1981 г., г. Ереван). В 2001 году окончила фортепианное отделение (рук. Ж. Г. Гавджян) Ереванского государственного музыкального колледжа им. Р. Меликяна, в 2006 году - теоретическое отделение ЕГК (рук. кандидат искусствств. А. А. Пахлеванян), в 2009 г. - аспирантуру ЕГК по специальности "Музыковедение" (рук. проф., канд. искусствств. А. А. Пахлеванян), по теме "Языково-стилистические особенности средневекового народно-профессионального музыкального творчества". Преподает: с 2006 года по сей день в Ереванском государственном музыкально-педагогическом колледже им. А. Бабаджаняна (гармония, теория музыки), с 2017 года - в АГПУ им. Х. Абовяна (солифеджио-гармония, полифония, история армянской музыки, армянское народное музыкальное творчество). Автор научных статей: "Особенности народной песни и народно-профессионального искусства", 3-я научная сессия молодых армянских искусствоведов, Ер.: Гитуцион НАН РА, 2008, С. 118-129; "Языково-стилистические особенности средневекового народно-профессионального музыкального творчества" //Музыкальная Армения, # 1 (36) 2010, С. 17-21; "Песни Акна как примеры гусанского искусства" 4-я научная сессия молодых армянских искусствоведов, Ер.: Гитуцион НАН РА, 2010, С. 204-211; "Гусаны как носители светского профессионального искусства в древней и средневековой Армении" //Музыкальная Армения, # 1 (36) 2010., С. 22-24.

Information about the author: HAKOBYAN ARMINE A. (born 27.12.1981, Yerevan). In 2001 she graduated from the piano department (dir. Zh. G. Gavdzhyan) of the Yerevan State Music College after R. Meliqyan, in 2006 from the theoretical department of YSC (dir. PhD candidate A. A. Pahlevanyan), in 2009 got a postgraduate degree in YSC with the profession "Musicology" (dir. prof., PhD candidate A. A. Pakhlevanyan). Since 2006 till these days teaches in the Yerevan State Musical Pedagogical College after A. Babajanian (harmony, music theory), since 2017 in ASPU after Kh. Abovyan (solfege-harmony, polyphony, history of Armenian music, Armenian folk musical creativity). Author of scientific articles: "Peculiarities of folk songs and folk professional art", 3^d scientific session of young Armenian art historians Yer.: Science, NAS RA , 2008, P. 118-129; "The linguistic and stylistic peculiarities of medieval folk professional musical creativity" / /Musical Armenia, # 1 (36) 2010, P. 17-21; "Songs of Akn as an Examples of Gusan Art" 4^d Scientific Session of Young Armenian Art Critics, Yer: Science NAS RA, 2010, p. 204-211; "Gusans as a bearers of secular professional art in ancient and medieval Armenia" / /Musical Armenia, # 1 (36) 2010, p. 22-24.

Резюме

Фольклорист, кандидат искусствоведения Армине Ашотовна Акопян. - «Обрядовые песни Мушской долины исторической Армении».

Среди записанных Комитасом Мушских песен большой интерес представляют несколько свадебных песен, благодаря которым можно получить представление об обрядовых традициях мушцев. Свадьба в Муше представляла собой целый ряд обрядовых действий: выбор невесты, смотрины, обручение, разрезание хлеба, закладка теста для хлеба и ритуальной гаты, обряд крещения хной, венчание и т.д. Во всех перечисленных обрядах четко просматриваются черты, свойственные мушцам, а неотделемой частью всего этого являются песни и танцы. Мушцы – народ, приверженный традиции. Свою будущую невестку часто выбирали с колыбели. Песни, сопровождающие этот обряд, назывались “оророщах” (на дуге колыбели делали зарубку). В старину выбор невесты осуществляли родители, и были случаи, когда жених и невеста впервые видели друг друга лишь в день свадьбы. Обряд венчания у мушцев богат песнями, танцами, игрой на народных инструментах, интересными обычаями.

Summary

Folklorist, PhD candidate Armine Ashot Hakobyan. - “Culture ritual songs of Moush field’s historical Armenia”.

Among the many songs from Moush transcribed by Komitas, there are several weddings songs, including Ver Eli, Hay!; Kharsig Ver Are!; Me Korse Tanina; and Shvage Zave. Wedding ceremonies in Moush were unique, and included many rites - the arrangement of the marriage between families, the first visit of the groom's family to see the bridge, the engagement, the first shared meal, the first visit of the groom to the bride, khoncha-pokhcha (the sending of presents by the groom to the bride prior to the wedding), dashdadronk (a gathering of the bride's and groom's relatives on the Friday prior to the wedding), azbalvatetsk (the laundering of the groom's clothes for the last time before the groom is married), hinatrek (the sending of a meal of bread and fruits from the groom's home to the bride's home), gendrel/trash (the procession that leads the groom, dressed in his wedding suit, to his new home), the wedding, etc. Naturally, for the inhabitants of Moush, song and dance were an integral part of most of these traditional wedding rites.

The people of Moush were superstitious. Weddings were arranged by families while their children were still in their cradles. Songs called ororotsakhaz (cradle tunes) were sung over the cradle to mark the occasion of the choice of the infant's future mate (the infant's parents would draw a musical note on the roof of the cradle while singing these songs). In some cases grooms and brides only met each other for the first time on the day of their wedding. The wedding ceremony itself was accompanied by songs, dances, and unique local rituals.